

ԹԵՄԱ 16

Դասընթացի անվանումը՝	«Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է վարչական դատարանի, վարչական վերաքննիչ դատարանի, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունների քննարկմանը և վերլուծությանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը:
- Վարչական դատարան դիմելու իրավունքը:
- Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարանի կազմը:
- Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցադիմումների քննության առանձնահատկությունները:
- Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատական ակտ կայացնելու առանձնահատկությունները:

- Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հիմքը:

Դասընթացը վարում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահ Հովսեփ Բեդկյանը: